այստեղ, այս գիշեր մենք ապահովված չենք մշուշի դէմ։ Գիշերս կարող է մշուշը ծածկել մեզ և այս ձորերը, և մենք կորած ենք այն ժամանակ»։ Ցաւելով յիշեցի կողմնացոյցս, որ ես Աւաղաղումը Փաշախանին էի ընծայել։

«Բայց մենք մոտակայ քարայրներում այդպիսի հանգամանքում չենք կարող ուտելիք գտնել»։

—«Բոլոր քարայրները այժմ դատարկ են, բացի այն մէկից, որ մենք տեսանք»։

«Ապա ինչ եղան նոցա բնակիչները», հարցրի ես։

—«Բոլորը մեռան սովից. մնացածները ցրվեցան»։—

«Ի՞նչու համար հարուստ ցեղերը չ՝օգնեցին այդ խեղճերին և չ՝ազատեցին նրանց սովից»։

—«Քուրդ ցեղերը»—պատասխանեց Բրօն.—«յաւիտենական թշնամութիւն են մնուցանում իրար դէմ. ցեղերը ցեղերի դէմ յարուցանում են կռիւ, սպանութիւններ, կրակ, աւերումն և երբէք օգնութիւն։ Ես ինքս մի հայի շնորհիւ ազատվեցայ սովամահից։ Այդ մարդը իւր ընտանիքի կտոր հացից ինձ բաժին հանեց»։

Իրաւունք ունէր Բրօն, ցեղեր ցեղերին երբէք չեն օգնիլ։ Ցեղապետակա՛ն սկզբմանց մէջ այդ չկայ։ Մի ցեղը իւր աճելութեան համար պիտի ճնշէ միւսին։ Քրդերը, այդ մեր վայրենացած ազգակիցները մեր պատմական կեանքի տխուր պատկերն են ներկայացնում։ Որովհետև նրանց մէջ դեռ ազնուա-